

[Բ]

1 Եւ արդ առեալ նախաբանեսցուք, եթէ իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց³, ոչ ի մենջ արուեստախաւսեալ մերոյն կարծեալք վիճաբանելով, այլ յաւրինակացն տուելոց⁴ զընդդիմակացն բարձրացուցանել: 2 Քանզի⁵ Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զհարոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց՝ զքնաղ եւ զբարձրագոյն հատուցումն բաւական համարել յանսպառ յաւիտեանսն, այլ եւ աստէն իսկ կանխագոյն. զի անցաւոր⁶ ժամանակաւքս մատենապատում երկնաբերձ պայծառացուցեալ, զհոգեդիւնացն եւ զմարմնականացն առ հասարակ փայլիցեն:

3 Եւ ի մովսիսական պատմութեան յայտնի է երանելեաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաստատութիւն⁷, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն, սքանչելական⁸ կենացն պայծառութիւն: 4 Չի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալ, եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ⁹ ի վերայ ամենակուլ մահուան կենալք երեւեալ, եւ միւս ոմն¹⁰ բովանդակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ¹¹ աստուածապատիժ¹² ծովուն հանդերձ ամենայն շնչականաւք տարելոր ժամանակաւք նաւակաց պահեալ¹³, եւ միւսոյն յանկարծագիւտ հաւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուածախաւս դաշնաւոր կատարեալ, եւ զաւետիս¹⁴ հանդերձելոց¹⁵ բարեացն¹⁶ ժառանգեալ: 5 Բազմաւք ե՛ւ այլ նոյնպիսիք աստուածածանաւթ¹⁷ գտեալք, որոց¹⁸ ազնուականութիւնքն յամենայն աստուածածանաւթ գրոց պատմի:

1 *b* զկամարագոյնս / *c* ուղղ. զկարեւորագոյնս

2 *bc* զուղղագոյնս

3 *bc* կատարելոցն

4 *bc* տուելոցն

5 *bc* քան *ի/ս*. քանզի

6 *bc* զանցաւոր

7 *bc* հաստատութեան

8 *bc* զսքանչելական

9 *de* արուեստին

10 *bc* միւսումն *ի/ս*. միւս ոմն

11 *bc* լեռնացելոց

12 *bc* զաստուածապատիժ

13 *b* պահել

14 *bc* աւետիս

15 *bc* զհանդերձելոց / *de* հանդերձելոցն

16 *e* բարեաց

17 *de* աստուածածանութիւնք

18 *b* յորոց